



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է	Վավերացնում եմ
ՀԱԱՀ համալսարանի կողմից	ՀԱԱՀ ռեկտոր
"06" 08 2015 թ. (տրվ. № 9)	Ա. Թարվերդյան
	09.08.2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ
 ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ
 ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ
 ՆՊԱՍՏՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը (այսուհետ՝ համալսարան), հանդիսանալով ագրոպարենային համակարգի մասնագետների պատրաստման և արտադրության կազմակերպիչների վերապատրաստման միակ կենտրոնը հանրապետությունում, հիմք ընդունելով իր առաքելությունն ու ռազմավարական ծրագիրը, արտաքին կապերի ընդլայնման և միջազգային համագործակցության խթանման նպատակով որդեգրել է հետևյալ քաղաքականությունը.

- ՀԱԱՀ-ն կարևորում է արտաքին կապերի և միջազգայնացման խթանումն ու ընդլայնումը համալսարանի համար և այն համարում համալսարանի գլխավոր ռազմավարական ուղղություններից մեկը:
- Դառնալ միջազգային բարձրագույն կրթական տարածքի մի մաս, լինել մրցունակ, առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոն:
- Միջազգային կապեր հաստատել արտասահմանյան բուհերի և գիտակրթական այլ հաստատությունների հետ, և սրանով նպաստել համալսարանի ինտեգրմանը Եվրոպական միջազգային կրթական տարածքին, աջակցել հայ գիտնականներին՝ արտասահմանյան բուհերում ներկայացնելու հայկական գիտությունը, գիտահետազոտական և ուսումնական ծրագրերի իրականացման առումով հասնել միջազգային որակական ստանդարտներին, համապատասխանեցնել ՀԱԱՀ-ի և արտասահմանյան առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերն ու ուսումնական պլանները, ապահովել ուսանողների շարժունությունը:
- Բոլրնյան գործընթացի պահանջներին համապատասխան, աջակցել նոր մասնագիտությունների և մասնագիտացումների ստեղծմանը և իրականացնել միջազգային գիտակրթական փոխանակման ծրագրեր, ինչպես նաև բարձրացնել ՀԱԱՀ-ի միջազգային հեղինակությունը՝ այն դարձնելով առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոն:
- Ստեղծել անհրաժեշտ պայմաններ և համալսարանը դարձնել գյուղատնտեսության ոլորտի օտարազգի ուսանողների ուսուցման համար մրցունակ կրթօջախ:

Միջազգային համագործակցության ոլորտում ՀԱԱՀ-ի հիմնական նպատակներն են.

- արտերկրում համալսարանի հեղինակության բարձրացում,
- որակի միջազգային ստանդարտներին համապատասխան հետազոտական և կրթական ծրագրերում ներդրում,
- համալսարանում և արտասահմանյան առաջատար բուհերում գործող մասնագիտական կրթական ծրագրերի և ուսումնական պլանների ներդաշնակեցում,
- համաձայն Բոլոնյան գործընթացի՝ ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության ապահովում՝ Հայաստանից արտերկիր և հակառակը, և աշխատակիցների ընդգրկում միջազգային կրթական գործընթացներում
- համալսարանը դարձնել արտերկրից ժամանած գյուղատնտեսության ոլորտի ուսանողների ուսուցման տարածաշրջանային կենտրոն:

Միջազգային համագործակցության ոլորտում համալսարանի խնդիրներն են.

- միջազգային չափանիշներին համապատասխան համալսարանի կրթական և գիտական գործունեության որակի ապահովում, Եվրոպական կրթական չափանիշների ներդրում և կիրառում,
- արտասահմանյան բարձրագույն գիտակրթական հաստատությունների հետ կապերի հաստատում և ուսանողական ու գիտամանկավարժական գիտակրթական փոխանակման ծրագրերի իրականացում,
- միջազգային կրթական և գիտահետազոտական ծրագրերի մասնակցություն և իրականացում,
- միջազգային կրթական որակական չափանիշների ներդրում և կիրառում,
- համալսարանի և արտասահմանյան առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական պլանների համադրում, արտասահմանյան արդյունավետ փորձի տեղայնացում,

- միջազգային շուկայում գյուղատնտեսության ոլորտի մրցունակ մասնագետների թողարկում, ներառյալ՝ նոր մասնագիտությունների և մասնագիտացումների հաշվին:

Միջազգային համագործակցության բնագավառում լուծելով առաջադրված խնդիրները, համալսարանը.

- իրականացնում է միջազգային կրթական, գիտամանկավարժական և խորհրդատվական գործունեություն,
- մասնակցում է կրթության որակին, վերջինիս բարձրացմանն ու ինտեգրմանը վերաբերող միջազգային միջոցառումներին,
- կազմակերպում և անցկացնում է ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունությունն ու փորձի փոխանակումն արտասահմանյան հեղինակավոր ուսումնական հաստատությունների հետ,
- մասնակցում է միջազգային ֆոնդերի կողմից հայտարարված մրցութային ծրագրերին: